

կով կարճ են քան օտար բառերը: Նկատում է նաեւ, որ այդ բառերի կերպարանքը էական փոփոխութեանց ենթարկուած է հայ հոգի վրայ:

Այս երեւոյթներին կրթնած՝ նա յօրինում է իր տեսութիւնը հին հայերէնի շեշտադրութեան մասին. «Հնդեւրոպական բառերի կերպարանքը էական փոփոխութեանց է ենթարկուած հայ հոգի վրայ շեշտի շնորհիւ: Պատմական շրջանից բաւական առաջ հայերէնի մէջ հաստատուած է ուժգնութեան մի շեշտ — անկասկած զօրեղ — հնդեւրոպական բառերի վերջնութիւնը վանկի վրայ»: «Այս ուժգնութիւնը երկու գլխաւոր հետեւանք է ունեցած». նախ՝ հնդեւրոպական բառերի վերջին վանկի ձայնաւորները սղած են, որի հետեւանքով այդ բառերն սկզբունքով մի վանկ պակաս ունին հայերէնի մէջ: Օր. սանսկրիտ *panca* (երկու վանկ) հայերէն *հինգ* (մի վանկ): Սրա հետեւանքով բոլոր հայերէն բառերը շեշտուած են վերջին վանկի վրայ (որովհետեւ հին բառաձեւի վերջին վանկերը սղած են պատմական շրջանից առաջ. Ն. Ա.) եւ այս շեշտադրութիւնը շարունակում է մնալ բարբառների մեծ մասի մէջ: Նոր լեզուի մէջ սակայն, ասում է նա, նկատելի է մի երկրորդական շեշտ, որ զարկում է առաջին վանկին. այս երկրորդական շեշտը բաւական հին է. Կիլիկեան հայերէնի «հաւատամ» ձեւը, որ ծագած է հին «հաւատամ» ձեւից՝ կարող էր կազմուել այն դէպքում միայն եթէ «հաւատամ» բառը շեշտուէր նաեւ առաջին վանկի վրայ իբր «հաւատամ»:

Վերջնութիւն վանկը շեշտելու երկրորդ հետեւանքն այն է, որ շեշտուած վանկին նախորդող վանկի ձայնաւոր տարրերից մի քանիսը, ենթարկում են փոփոխութեան, ինչպէս ի եւ ու, որ դառնում են ը եւայլն: Ա. Մէյլէի ասածն այն է, ուրեմն, թէ նախ քան գրերի գիւտը հայ բառերն ուրիշ կերպարանք ունէին — մի վանկով աւելի երկար էին եւ շեշտում էին վերջնութիւն վանկը. սրա հետեւանքով վերջին վանկերը սղեցին կամ չքացան եւ դառնական շրջանում բառերի շեշտը վերջին վանկի վրան էր արդէն: Այսինքն՝ սա եւս նոյն կարծիքին է ինչ որ մեր երեք գիտունները: Բայց նոր է իր այն կարծիքը, թէ հայերէն բառերը

յետագային ունեցած են եւ մի ուրիշ, երկրորդական շեշտ, որ զարկում էր առաջին վանկին¹⁾

Ն. Մառ անշուշտ նոյնպէս լսած ու կարգացած էր թէ հայերէն բառերի շեշտը վերջին վանկի վրան էր: Բայց նա դիտում է մի շարք երեւոյթներ, որ դժուար է բացատրել այդ տեսութեամբ: Նա յօրինում է իր տեսութիւնը հին հայերէնի շեշտադրութեան մասին, կարծում եմ Ա. Մէյլէից անկախ, որովհետեւ երկուսն էլ իրենց քերականութիւնները լոյս են ընծայել միեւնոյն տարին (1903): Նա գրում է.

«Հին հայերէնի մէջ շեշտը դրւում էր վերջնութիւն վանկի վրայ: Եթէ որեւէ ձեւ կազմուել համար բառը երկարած է մէկ կամ աւելի վանկով, ապա շեշտն եւս դրա համեմատ փոխադրւում է նոր տեղը, բայց նա այնուամենայնիւ դրւում է վերջնութիւն վանկի վրայ՝ հաշուելով վերջից»:

«Հասկանալի է, շարունակում է Ն. Մառ, ասելով վերջից երկրորդ կամ վերջնութիւն վանկ՝ պէտք է պատկերացնել բառի նախաւոր կերպարանքը: Յետագային վերջին վանկը շեշտ չունենալով, ոչ միայն թուլանում էր եւ եթէ ձայնաւորը սղելով դառնում էր ը՝ վանկն իր հերթին դառնում էր ծածուկ (այսինքն չգրւող ը-ով վանկ. ինչպէս՝ ոսկ(ը)ր, դառ(ը)ն եւայլն. Ն. Ա.), այլ երբեմն բոլորովին չքանում էր, ուստի եւ վերջից երկրորդ վանկը դառնում էր վերջից առաջին վանկ, այսինքն՝ վերջին վանկ: Այնուամենայնիւ հայոց շեշտադրութեան նախաւոր տեղը — վերջնութիւն վանկը — մթազնած չէ դեռ եւս գրարար լեզուի մէջ. դեռ աւելին՝ հայոց շեշտադրութեան այս հիմնական դրութեամբ միայն բացատրելի են ամենից աւելի բնորոշ երեւոյթները գրաբարի քերականութեան»²⁾: Այնուհետեւ նկատում է թէ հին հայերէնի շեշտադրական կարգը պահուած է Ղազարի բարբառում, որ շեշ-

1) St'ou A. Meillet, Esquisse d'une grammaire compare'e de l'arménien classique, էջ 1-2:

2) Ն. Մառ, Քերականութիւն հին հայերէն լեզուի. (ոուսերէն), էջ 34-5: